## 33. ԻՐԵՔՅ ԱԽՊԵՐ

Կէղին իրեքյ ախպեր:

Էն մեկ ախպեր կէլի, կէրթա քանաքյ ուր կըսմընթի հիտև: Կը տեսնա, օր իրեքյ մարթ գէ էտա տեղ: Մեկ կոր ա, մեկ թոփալ ա, մեկ էլ՝ չփլախ:

Կորն պալթե'մ պըռներ ա ծեռ, մեկի'մ մուրուս թրաշ կէներ:

Թոփալն էլ ճէուր կը պերա, էն թրաշ էլնողի իրես կը թըրջա:

Էն չփլախն էլ խըրաբա, անչախմախ հրացա'մ գէ ծեռ:

Մարթուն էն չփլախ կասա. - Տէու դէ՞ր կէրթաս:

Կասա. - Ես կէրթամ իմ կըսմընթի հիտև:

Կասա. - Ձի էլ տար խընդ քյե:

Կասա. - Քյե տանիմ ի՞նչ, տէու չփլախ, քէու թըվանքյն էլ խըրաբա:

Կասա. - Տէու ձի տա՛ր, հաալբաթ ես քյե օգէուտըմ կէնեմ:

Կասա. - Դե՛, արե՛, էրթանքյ:

Չփլախ կասա. - Ձի էրկու խատ ինգըր կա, կը պերեմ խընդ ձի:

Կասա. - Քէու ինգըրներ վո՞ն են:

Կասա. - Մեկ էնա կորն, մեկ էնա թոփալ:

Կասա. - Թոփլից, կորից ի՞նչ խասկընանքյ:

Կասա. - Տէու պե՛, քէու ի՞նչ պետքն ա, տէու պե՛, տանինքյ խընդրաց:

Կասա. - Դե՛, գյընա՛, քէու ինգըրներ պե՛, էրթանքյ:

Կէլին էտա չորս մարթ, կէրթան խընդրաց:

Շատ ու քիչ կէրթան, էն կորըն լապըզտրակըմ կը տեսի:

Չփլախն էլ կառի ուր անչախմախ հրացան, կընգի դիրք:

էն թոփալն էլ կը վանզա, կը պըռնա սաղ-սաղ:

Չփլախ կառի լապըզտրակ, կը տընա ուր ծոց:

Կէրթան իրեքյ խըրաբա գյեղ:

Կընգին, կան կը գան, գյեղի մեչ իրեքյ պառավ կը կընդին: էն էրկու պառավ մեռուկ են, էն մեկն էլ համա ընգեր ա խընձ խոգաւն:

Կը պերեն, էտ պառավ կը տըփեն, խոգյի կը գա, կը ժըրի:

Կասա. - Ի՞նչ կուզեքյ ձենե, հո՞ւր կը տըփեքյ:

Կասա. - Էլի՛, պուտուկ մ'ա, պըղինձ մ'ա կընդի՛, պե՛, մեր լապըզտրակ էփենք:

Կէլնի, պըղինձըմ կը կընդի, պերա, պըղընձին ոռ չըկա, ծակ:

Կը պերեն, կը տընեն վըր կրակին, կէփեն, կուտեն: Էմալ կուտեն, փորներ ուտելուց կը պատռի, պերներ չիմանար:

Տիր մ'էլ կը տեսնան՝ լապըզտրակ կէլնի, կը փախի: Կընգին հիտև, չըն կանա պըռնե:

էն մարթն կասա. - Օգաւտ չէներ էսա ինգըրներ, տառնամ, էրթամ:

Էտա թոփալ, կորընն, չփլախ կէրթան գյեղըմ, մեկ կէղի նախ-ուրթ, մեկ էլ խովիվ, մեկ էլ հորթարած:

Էտոնց հաղեր աշուն կը ժողվեն, կէղի դըկու'մ պեռ:

Կը թոնեն, կէրթան ուրիշ գյեղ մ' էլ:

Էտա մարթն կը թոնի, կէրթա, կը տեսի տաշտի'մ մեչ մեկ խաղիվորըմ՝ ճաչ սանդաւխըմ շըլկած, վար կէնա:

Կը խառցնա, կասա. - Խաղիվո՛ր, էտա ի՞նչ սանդաւխ ա, շալ-կեր ես:

Կասա. - Ճամխո՛րթ, մը՛ խառցնա, ընցի՛ գյընա՛, քաւ ի՞նչ գոռծն ա:

Կասա. - Չէ՛, ես կը խընդրեմ՝ ձի ասես՝ տաւ խաղիվոր, ընչի՞ ես շալկե էտա ծանդըռ սանդաւխ:

Կասա. - Վաղլա՛, օր կը խառցընես, իմ կընգանն աչկն տաւսն էր, ես էլ հախու տըրիր եմ սանդաւխ վեր, շալկեր եմ:

Կասա. - Խաղիվո՛ր, մեկ էտա սանդաւխ տիր գյետին, խենքյ ինչպե՞ս ա քաւ կնիկ՝ խորո՞տ ա, թե՞ գյեշ:

էն էլ կը տընա գյետին սանդաւխ:

Կը պանան, կաչկեն, կը տիսնան՝ կնիկն էլ, սիրողն էլ գի սանդուխ վեր:

Մարթն էլ կէլի, կը թոնի, կէրթա:

Կասա. - Ես դի՛ր էրթամ, ամլա հաջլաջիբ պանե՞ր ձի ռաստ տը գան:

Կէլի, կը թոնի, կէրթա: Շատ կէրթա, քիչ կերթա, շատ ու քիչ Աստված գյիտա, կերթա՝ մեկ մարթըմ կը գա հառեճ:

Կասա. - Դի՞ր կէրթաս:

Կասա. - Կէրթամ խընդ իմ կըսմըթին:

Կասա. - Ես էլ էղիմ քյե ինգըր, խընդրաց իյանքյ:

Կասա. - Շա՛տ աղեկ կէղի:

Կէլին, խընդրաց կերթան:

Էտա թաժա գալացողի խետն էլ խաց շատ քիչ կէղի, էտ հառաճին ինգըրոչ խաց շատ կէղի:

Հառաճ կը պերեն էն խին մարթու խացեր կուտեն խընդրաց, չում կը խըլըսի:

Դիր կասա. - Պե՛ր՝ քիւ խացերն էլ ուտենքյ:

Կասա. - Չէ՛, ես իմ խացեր չըմ իտար քյե:

Կասա. - Նամառտիւթեն մ' էնե, պե՛ ուտենքյ:

Կասա. - Նամառտ էղիմ, չէղիմ, չը՛մ իտար:

Մեկ մուղդարըմ կէրթան, շատ կանոթնա հառաճի մարթ, կէլին, էն տեղ կը կըռվին:

Կը պերա, զէտա անոթի մարթ կը թալա գյետին, կը տըփա էն նամառտ մարթ, զաչկեր խանա, կը թալա վըր հախպըրին, կը թոնա, կէրթա:

Կը մնա, մեկ բազըրկանըմ կը գա, կը տեսի, օր մեկ կո՛ր մարթըմ խընդ ճամխին:

Կը պերեն, շապթի՛մ խաց կը լըցին կուշտ, օր ուտա ու կը թոնեն, կէրթան:

Մեկ վեց-յոթ օր կը մնա էտա կոր մարթ, խացեր կուտա, խացեր կը խըլըսի, էրկու եղվընիկ կը գան վեր էտա հախպըրին, ճիւր կը խմեն, կը տեսին՝ կոր մարթըմ գի էտա տեղ:

Էն մեկ եղվընիկ ասաց. - Էսա մարթ շատ աղեկ մարթ մ'էր, մեկ անաստված մարթու՛մ ռաստ էկավ, էսա պան էրաց գյըլիխ:

Էն մեկէլ եղվընիկ կասա. - Եթե էն մեր լեզուն խասկըներ, էնոր աչկեր գի էնոր ջեբ ա, մեկ աչկ ուր տեղ տնե՛ե՛ր, ես թե-

բուռըմ տը թանլեր ըստանա, էնիկ թաթխեր մեչ ճըրհուն, զաներ աչկեր, կը ժըրեր:

Էտա մարթն էլ քյընուկ, էրազի մեչն կը տեսնա էտա եղ-վընըկներ, կը լըսա էնոնց զրհց:

Մարթն կը հիշարնա, ծեռ կը տա ուր ջեբ, ուր աչկեր կը կընդի, կը տընանա ուր աչկերուն, ծեռ կըտա կըշտեր, թեբուռ մ' էլ կը կընդի, կը զանի ճըրհու մեչ, կը տա աչկեր, աչկեր կը ժըրի:

Կէլի, կը տա ճանմբախ, կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա, կիյա սարըմ: Մութն կը տա վերեն հիրիկուն, կը մնա էտա սար: Մեկ ծառի տակ կը նստի, կը տեսնա հիրիկուն մութն կը տա, առչ, աղվեսըմ կը գան:

Էտա մարթն էլ կէլնի ծառ վեր հախու:

Աղվես ու առչ կը գան, կը նստին ծառի տակ:

Աղվես կասա. - Ա՛ռչ ախպեր, էսա դանրբար պա՛մ չը՞ս պա-խեր, էլնես, պերես ուտինքյ:

Առչ կասա. - Վանլլա՛, զանտըմ պախեր եմ, թը մնա գյիշեր, էրթամ, պերեմ:

Աղվես կասա. - Դե, ո՞րն կա էսա դանրբար, մութն տվեր ա, էլի՛ գյընա, պե ուտենքյ:

Առչն էլ կէլի, կէրթա մեկ քանրի՛մ տակ ջանդանկ-մանդանկ կա, կը պերա, ուտին:

Աղվես կասա. - Ա՛ռչ ախպեր, տհու փարա, պան իսկի չը՞ս պախեր:

Առչ կասա. - Վանլլա՛, էն ծառի տակ պուտուկըմ օսկի խորեր եմ:

Աղվես կասա. - Շա՛տ աղեկ, թը մնա, որ օր օր նեղութեն ընգենքյ, տանենքյ մե կերակուլ առինքյ:

Էն մարթն էլ ծառը վեր ականջ կէնա:

Կը մնա չուր խըլիսուն: Աղվես ու առչ կը թոնեն, կէրթան: Էտա մարթն կէճի տակ ծառեն, ծառի տակ կը փորա, կառի ըզ-փարեն, ուր խետի խետ կը տանռնա, կը գա:

Կը գա, էն նանմառտ մարթ, օր ուր աչկեր խանած էր, ուր ռաստ կը գա:

Կը խառցընա. - Էտի ի՞նչ ա քհու շըլակ, տհու էլման պըռծար, էկա՞ր:

Կասա. - Փարա յա:

- Հո՞ւստ կը պերես:

- Էնա՜ սարեն:

- Ի՞նչըխ էղավ, ի՞նչըխ չէղավ:

Կը պառմա, թե՝ ես գյիշեր քյընա ծառի վերեն, առչ ու աղվես էկան, ձի շանց տվին:

Էն մարթն էլ կէլի, կէրթա:

Կասա. - Տ'էրթամ, բալքո ձի էլ էնպես պա'մ ռաստ գա:

Կէրթա սար, մութ կը տա, կէլի էնտեղ մըսաֆըր: Կը տեսի, օր թե ծառի տակ փորուկ ա, էն էլ կէլի ծառ վեր:

Կը մնա, աղվես ու առչ հիրիկուն կը գան:

Աղվես առչուն կասա. - Էլի՛, քու փարեն, պանն աչկա՛:

Առչ կէլի, կէրթա կաչկա, կը տեսի, օր փարեն, պաներ տարած:

Կը տառնա, կը գա, աղվըսուն կասա. - Ես հէրեկ ի՛նչըխ էրի խըն քյե, չէղավ, ես ասի՝ թը մնա գյիշեր խալի էղի, նոր էրթամ, պերիմ, տու համան ձի ճամխեցիր, մարթ ա էղեր էսա դարբար, մեր ծեն լըսեր, մեր փարեն տարեր ա:

Աղվես կասա. - Թը ծառ վիրն է եղած, չըմ գյիտի, թե չէ՝ գյետին մարթ չըկեր:

Առչն էլ կասա. - Խեմ, էրթամ աչկեմ:

Կէլի, ծառ կաչկա, կը տեսի օր թը մարթըմ ծառ վեր:

Կը կանչա, կասա. - Աղվե՛ս ախպեր, արի՛, մեր փարի տարող էլեր ա ծառ վեր:

Կէլին, էրկըսով կը պերեն տակ, կը ճըղճըղեն, կուտեն:

Էն մեկէլ մարթ գյընանց ուր տուն:

Ուր ախպեր կը խառնցնեն. - Տու էտա փարեն հո՞ւստ պերեր, դո՞ր գանցիր, դո՞ր էկար:

Կը պատմա ուր գյըլխու գալած:

Էն միճնեկ ախպեր կասա. - Վալլա՛, ես էլ տ'էրթամ: Բալքո Աստված ձի կըսմանքըմ խասուցա:

Պստիկ ախպեր կասա. - Ջա՛նըմ, արի մ'է՛րթար: Կը խես՝ մեր ճոչ ախպոր գյըլոխ ինչե՛ր ա էկած: Մ'է՛րթար, խեղճ ես, քու գյըլոխն էլ էտա պես պաներ կը գան:

Կասա. - Չէ՛, ես կէրթամ:

Կը պերա ծառի տունգ մ' էլ կը պերա, կը տընգա բանչի մեչ:

Կասա. - Քանի օր էսա տունգ կանաչ ա, հիմացեքյ օր ձի պա՛մ չէղեր, ես աղեկ եմ, եփ օր տեսաքյ առավ չորնալ, գյիտցեք, օր ես կընգիմ նեղուքնի մեչ:

Կասա ու կը թոնի, կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա, շատ ու քիչ Աստված գյիտա, մեկ մարթակեր պառավըմ կը գա հանեճ:

Պառավ ասավ. - Մա՛րթ, տու դի՞ր կէրթաս:

Կասա. - Կէրթամ խընդ իմ ապրուստին:

Կասա. - Արի՛ էրթանքյ իմ տուն, ձի էրկու խընրեղեն ծի կա, էրկուսն էլ կարմիր բանշ, ծիեր մեկ տամ քյե: Ձի հանխպուր մ' էլ կա, օր թե քու ծեռքյեր, քու մազեր լըվանս, կէղի օսկի:

Կասա. - Անեվանե հե՞ր տը տաս ձիկ:

Կասա. - Մեռի՛մ քյե, գանս, չորս կանթեն պըղինձըմ ճուր եմ եռցուցե, վերցենքյ խընդրանց, տանենքյ, ձի օգընես, իմ գյըլուխ լըվանս, էն մեկ ծին տը տամ քյե:

Կասա. - Աղե՛կ, էրթանքյ:

Կէլին, խընդրանց կէրթան, խանլիվորըմ կը գա հանճևներ:

Խանլիվոր տըղին կը խառցընա. - Դի՞ր կէրթաս, տըղա՛:

Կասա. - Կէրթամ խընդ էսա պառվուն:

Կասա. - Դե՛ արի, քյե կանվիթի մ' էնեմ ու գյընա՛:

Տըղեն էլ կը տանռնա խանլիվորու մոտ, կասա. - Պապի՛կ, ասա՛ քու ասած:

Կասա. - Էտա պառավ քյե կը տանի դի՞ր:

Կասա. - Պառավ կասա՝ արի՛ օգընա՛, իմ գյըլուխ լըվանքյ, քյե ծի՛մ տամ ու քու ծեռքյեր, մազեր էնեմ օսկի:

Կասա. - Ձանվանկ, էնի քյե կը տանի խանպա, էն պըղինձ ճուր օր եռցուցեր ա, քյե կը թանլա մեչ:

Կասա. - Ապա ի՞նչըխ էնեմ:

Կասա. - Էն գանխ, օր քյե կը տանի պըղընձի մոտ, քյե կասա՝ արի պըղինձ վիրու, առ, էյանքյ, տու էլ ասա՝ էտա պըղինձ շատ ծանդըր ա: Էն օր կը թանլա, էրկու կանթ կը վիրուցա, տու էրկու ոտ պըռնա, շուռ տուր մըչ պըղընձին:

Տըղեն կէրթա, պառվուն կը խասի, խընդրանց կիյան:

Կէրթան, պառավ տուռ կը պանա, մըտին տուն:

Տըղեն կը տեսի, օր մեկ պղինձըմ թանլաց վըր անգըռթին, սարսափելի կը եռա:

Պառավ տըղին կասա. - Դե՛, արի՛, վիրո՛ւ պըղինձ, տանենքյ իմ գյըլէխ լըվանքյ:

Կասա. - Մամի՛կ, էսի ծանդըր ա, տէւ էլ ձի օգյընա, էրկու կանթ ես պըռնիմ, էրկու՝ տէւ, առինքյ, էյանքյ:

Մամիկն էլ կէրթա, պըղընձի էրկու կանթեր կը պըռնա, կը կըզի, օր վիրուցա, տըղեն հիտուց էրկու ոտներ կը պըռնա, շուռ կը տա մըչ պըղընձին:

Մամիկ կը խաշի մըչ պըղընձին:

Տըղեն էլ կէլի, կէրթա տու՛մ: էրկու ծի կապուկ ա ըն տեղ: Նա՛ կը գըյընվեն, նա՛ կը ծախվին: Հըմեն մեկ կաժին խազար օսկի:

Գյընաց, փընդըռեց, ասաց. - Խի մամկե օսկե հախպէւր դէ՞ր ա:

Գյընաց, կան էկավ, հախպէւրըմ կընդավ էնոր պակի մեչ, ծեռքյեր ու մազեր լըվաց, էղան օսկի: էկավ ըզծի մ' էլ խեծավ ու էտուր ճամբախ, գյընաց:

Շատ գյընաց, քիչ գյընաց, շատ ու քիչ Աստված գյիտա, մութն էտու վերեն, գյընաց թագավրու բաղչի մեչ, ծին կապեց վըր հախպըրին, ինքյն էլ պառկավ, քյընավ:

Խըլիսուն էլ թագավրու բաղչապաներ էլան տէւս, տեսան օր մեկ խըրեղեն ծի՛մ կապուկ էտա տեղ, հախպըրի վըրեն էլ մեկ խըրեղեն տըղե՛մ քյընուկ՝ ծեռքյեր օսկի, մազեր օսկի:

Խանին տըղեն վեր, խառցընեցին. - Տէւ ի՞նչ տըղա ես, ի՞նչ տըղա չես:

Ասաց. - Ես ճամխորթ մարթ մ' եմ, իկեր եմ, խընդ իմ ապրուստին կան կը գամ:

Էտոնքյն էլ կասեն. - Ըստեղ թագավորի բաղչեն ա, հե՞ր ես քէւ ծին կապեր հինե:

Կասա. - Ես կարիբ մարթ եմ, չըգյիտցա:

Կը պըռնեն, կառին, կէրթան:

Կառին, կէրթան թագավորի տուն:

Թագավորին կասին. - Էսպես մարթ մ'ենքյ պըռներ, պերեր: էկեր էր, ծին կապեր էր քէւ բաղչեն:

Թագավոր կասա. - Մը՛ պըռնեքյ, օր օտար մարթ ա, չըգյիտցեր, ի՞նչ էնենքյ:

Թանգավորի տան մանկլուխներ կը գան թամաշա էտա տըղին:

Թանգավորի ախչըկա աչկ կընգի տըղին:

Թանգավորն էլ կը պերա, կը փըսակա վըր ուր ախչըկեն:

Խինգ, վեց օր խաղ, խաղտուն կէնեն:

Կէլնի, տու մ' էլ կը տա, ուր փեսեն ու ախչիկ կը նստին մեչ: Քանի'մ խատ ինգըր էլ կը տա էտոր: էն տըղեն էլ հար կէրթա նեճիր:

Ախչիկ տըղի ինգըրներուն կասա. - Թե օր կերթաքյ, չըլնի էրթաքյ ծախ թիվու ճամխով, էն ճամբախ Մըժու մորանի սարն ա, որ օր գացեր ա, չէկեր:

Կասին՝ շատ աղեկ:

Էնոնքյն էլ կէլին, կէրթան: Կէրթան ճամբախ, ճամբախ կըլնի էրկու:

Ինգըրներ կասին. - Էտա ծախ թիվու ճամխով մ'էրթար, քյելի՛, նա աչ ճամխով էրթանքյ:

Էն էլ կասա. - Չէ՛, ես էն ճամխով տ'էրթամ:

Ինգըրներ ի՛նչ կէնին, չէղիր խետ:

Կէրթա, ինգըրներն էլ կընգին հետև, կիյան:

Կէրթան, մեկ սար մ'էնոնց հառեճ կընգի, կը տան սար վեր, կէնա պիւքյ ու անձրև, կը տա վերենքըյներ:

Ինգըրներ չեն կանա դիմանար, էնի կերթա:

Կէրթա սարի գյըլիխ, մեկ խազալըմ հառճըվեն կը փախի:

Էն էլ կը լարա խազալի հիտև, խազալ կէրթա, զինքյ կը թալա մեկ շենլըկի մեչ: Էն մարթըն էլ կէրթա, կը մտի շենլըկի մեչ, կը տեսնա Արաբըմ կըլնի հառեճ:

Արաբ կասա. - Հե՞ր կը լարիս իմ խազալի հիտև:

Կասա. - Խազալ էր, իմ հառճվեն փախավ, ես էլ լարեցի հիտև:

Ըդտեղ կը կռվին վեր խազալին:

Կասա. - Արա՛բ, շատ աղեկ, օր տիւ կը կըռվիս, տանինքյ էսա խազալ տաշտի մեչ թոնինքյ, քանի մեր աչկ կը կըտրա, թ'էրթա: Նոր ըստիւց ծիանքյ կը խեծինքյ, կընգինքյ հիտև, որ օր գյընաց, պըռնեց, թըխ էղի էնոր:

Արաբ կասա. - Շա՛տ աղեկ, ես կընդունեմ էտա պան:

Խաղալ կը տանեն, թողնին տաշտի մեջ, քանի էնոնց աչկ կը կըտրա, խաղալ կէրթա: Էնոնքյ էլ ծիանքյ կը խեծին, կը լարին խաղալու հիտիվ:

Էտ մարթ կընցի, կէրթա պըռնա, ուր ծին աղեկ ծի յա: Կը տառնա, պերա Արաբի մոտ, Արաբ, էնի էլման կը կռվին վըր խաղալին:

Կասա. - Արա՛բ, տու ի՞նչ կուզես, թողիր, փախավ, ես գացի պըռնեցի, էլ ի՞նչ կուզես:

Արաբ կասա. - Արի՛ ես, տու թուխթ խաղանքյ: Եթե տու ձի տարար, խաղալ քուն ա, ա՛ռ տար, թի ես քյե տարա, քյե կը պըռնեմ, կախեմ իմ պատեն:

Կըստին, թուխթ կը խաղան, Արաբ մարթուն կը տանի:

- Դե՛,- կասա,- էլի՛, քյե կը տանիմ իմ տուն, տու պըռնավոր ես, ես քյե տը կախեմ իմ պատեն:

Արաբն ըզմարթ կը պերա, կախա էնու պատեն վըր քյինթ ու պերնի:

Էտոր մեկէլ ախպերն էլ, ծառ օր տընգյեր ա, կը տեսնի՝ ծառ առավ չորնալ:

Կիշկա ծառ, կասա. - Վալա՛, իմ ախպեր նեղութեն ա ինգե, դուց էնա ծառ չորցավ:

Տըղեն էլ կէլի, տա ճամբախ, էրթա, կասա. - Էրթամ իմ ախպոր հավար:

Կէրթա, մեկ խալիվորըմ կը գա հառեճ:

Խալիվոր կասա. - Կըտրի՛ճ տըղա, դո՞ր տ'էրթաս: Վալա՛, քու ախպերն էլ էկավ, էսա ճամբխով գյընանց:

Կասա. - Ապա տու իմ ախպեր կը ճանչընա՞ս:

Կասա. - Խա՛:

Կասա. - Օր իմ ախպեր կը ճանչընաս, դորվե՞ գյընանց:

Կասա. - Վալա, քու ախպեր մեկ պառավըմ խապեց, տարավ:

Կասա. - Է՛, էն պառավ տու ս'գյիտի՞ դո՞ր տարավ, դո՞ր չըտարավ:

Կասա. - Վալա՛, պառվու տուն գյիտիմ՝ գո էնա սարի հիտև:

Կասա. - Ապա չըգյիտցա՞ր՝ ինչ հապով կը տաներ իմ ախպեր:

Կասա. - Քու ախպեր կը խապեր, տաներ էնտեղ վնասեր, ես քու ախպոր պատվիրեր եմ, թի իմ խաբար էրեր՝ պըռծեր:

Կասա. - Ապա տու ս'գյիտի՞ ի՞նչ տ'էներ իմ ախպոր գյըլուխ:

Կասա. - Պըղինձըմ ճուր էր եռցուցեր, տը խապեր, քու ախպեր թալեր մըչ ճըրուն:

Տըղեն էլ կը տա ճամբախ, կէրթա:

Կէրթա, սար կընցի, տաշտի մեչ մեկ տու'մ կը տեսնա, կասա. - էղի, չէղի, էս ինա պառվու տուն:

Կէրթա տան մեչ, կը տեսի, օր պառավ թալուկ ա մըչ պըղընձին:

Կասա. - Վալա՛, էսա տեղեն էլ իմ ախպեր ազատվեր ա, խին դո՞ր ա էն նեղուբեն ընգեր:

Էն տըղեն էլ կէլի, կան կը գա, կարմիր ծի'մ կը կընդի, հախպուր մ'էլ պակի մեչ կը տեսնա, ուր ծեռքյեր, գյըլուխ կը լըվա, կէղի օսկի: Կէլի, ծին կը խեծի ու կէրթա:

Կասա. - Ծին օր կա, մըրազ ա, ծեռքյ գյըլուխ տը թոնիմ, դոր տանի՝ էն տեղ տ'էճիմ:

Ծին էլ կէրթա էտա բաղչի մեչ, որ տեղ էնոր ախպեր կաներ էր, ծիուց կէճի, կը պառկի էն տեղ, կը քյընի չուր խըլիսուն:

Խըլիսուն բաղչապաներ կէրթան, կը տեսին, օր ծի'մ ու տըղե'մ՝ էրկուսն էլ հառաճի ծիու նըմուշ:

Կասին. - Վալա՛, մեր թագավրու փեսեն օր գացեր էր նեճիր սար վեր, գո էկեր ա:

Շոտ էն մեկ կը վազա մը թագավորի ախչիկ, կասա. - Քու մարթ էկեր ա:

Էն մեկէլ ինգըրներ ըզտըղեն կը խանեն վեր քյընուց, կասեն. - Տու դո՞ր էր գացեր, Մըժու մորանի սարից ի՞նչըխ ես պըռծեր, էկեր:

Էն էլ կը հիմանա, թե հառաճ ուր ախպերն ա էկել ըստեղ, ուր ախպոր գյըլուխ ա էկեր, կասա. - Գո ես էլ պըռծա, էկա:

- Ապա քյելի, էրթանքյ, թագավորի ախչիկ շատ կասաֆաթ կէներ:

Կառին տըղեն, կէրթան թագավորի տուն:

Կը գան հառեճ, կը խընդանան:

Կասեն. - Տու գացեր Մըժու մորանի սար, ի՞նչըխ պըռծար, էկար:

Կասա. - Գї ես էլ պըռծա, էկա:

Կը տանին, հիրիկուն ախչիկ ու էնի կը գան ուրինց տուն վեր, կը նստին:

Ախչիկն էլ կը խառցնա. - Տї գացեր էսա տաս օր, ի՞նչըխ պըռծար, էկար:

Կասա. - Գї ես պըռծա, էկա:

Տեղ կէցկին, կը պառկին: Տըղեն թուր կը քաշա, կը տընա մեչ էրկուս:

Ախչիկ կասա. - Ջա՛նըմ, հե՞ր ամտըլա կէնես: Ես քյե առա, տї տաս օր չըմնացիր իմ մոտ, թողիր գացիր, մըկա էլ էկեր ես, ամտըլա կէնես: Օր ձի չըս ուզեր, ասա՝ քյե չըմ ուզեր:

Կասա. - Չէ՛, ես ուխտ եմ էրե, չում տիր մ' էլ չէրթամ էն սար նեճիր, չըմ իգա քї մոտ:

Ախչիկն էլ կասա. - Շա՛տ աղեկ, խըլիսուն գյընա՛:

Խըլիսուն ախչիկ կը կանչա ինգըրներուն, կասա. - էկե՛ք, տարե՛ք սար՝ նեճիր:

Էլման կէրթա:

Տըղեյներն էլ կը գան, կառնին էտա պստիկ ախպերն էլ, կէրթան:

Կէրթան, ինգըրներ խե ճամխին կասեն. - Ընցած օրն էլ տї գացիր Մըժու մորանի սար, մենք փախանք, մե էտուր պըռնել: Հէսօր էրթանք, մընք չընք կանար, տը փախինք գանք, էլման մե տը տա պըռնել:

Տըղեն էլ կասա. - Չէ՛, էնօր չուր դїր էկաք, հէսօր էլ չուր էն տեղ էկեք, տї կանեք ընտեղ, չուր ես տառնամ, գամ:

Էլան, խընդրաց գացին: Գացին մըչ էտա սարերաց՝ ծյուն, անձրև, էտոր ինգըրներ կանան ընտեղ, ու էտի գյընաց:

Գյընաց սարի գյըլїխ, մեկ խազալըմ հառճըվեն փախավ: Լարեց խազալի հիտև, խազալ զինքյ էթալ տան մեչ: Տեսավ, օր Արաբըմ տընեն էլավ տїուս:

Արաբ ասաց. - Տї ի՞նչ մարթ ես՝ կը լարես իմ խազալի հիտև:

Ասաց. - Ես նեճըրվան եմ, իմ հառճըվեն փախավ, եսն էլ կը լարեմ, պըռնեմ ձի:

Արաբ ասաց. - Շատ մարթ էտա խազալի հիտև լարե, ամա չըտարեր:

Ասաց. - Չէ՛, ես տը տանեմ:

Արաբ ու էտա տըղեն կըռվան:

Տըղեն ասաց. - Արա՛բ, ի՞նչ կուզես: Արե՛ էսա խաղալ թոնենքյ մըչ էսա տաշտին: Քանի որ մեր աչկ կը տեսնա, թը փախի, էրթա, ու ես, տու ծիանքյ խեծինքյ, լարենքյ հիտև: Ո՛ր պռընեց, առի էնոր:

Խաղալ թողին մեչ տաշտին, գյընաց, ծիանքյ խեծան, ընգան հիտև:

Շատ գացին, քիչ գացին, պստիկ ախպեր գյընաց, խաղալ պըռնեց:

Գինա Արաբ ու էնի կռվան:

Արաբ ասաց. - Ես չեմ հընդուներ, չեմ իտար քյե:

- Է՛,- ասաց,- ապա, Արաբ, տու ի՞նչըխ կուզես:

Ասաց. - Արե ես, տու թուխթ խաղանքյ, որ վերին տարավ, խաղալ տանքյ էնոր:

Խումար խաղցին, տըղեն զԱրաբ տարավ:

Արաբ գինա չէտուր:

Ասաց. - Ի՞նչ կուզես էլ:

Ասաց. - Գուլաշ մ' էլ առինքյ ես, տու:

Արաբ ասաց. - Գուլաշ մ'առինքյ, օր տու ծի տըրիր գյետին, ինչ կուզես՝ էրա: Օր ես քյե տանեմ, քյե տանեմ, կախեմ էնա պատեն:

Գուլաշ առան, զԱրաբ էտիր գյետին: Թուր քաշեց, օր վիզ տը կտրեր, Արաբ էղավ ախչիկ, ծըծվեր էխան տուս:

Տըղեն էլ չէզար, էլան վեր:

Ասաց. - Ապա ի՞նչըխ էնեմ, դուրիս խաղալ կը տա՞ս ծի:

Ասաց. - Կը տամ, ի՛նչ ուզես էլ, կը տամ:

Խաղալն էլ իտուր տըղին, տըղին էլ էլավ կնիկ:

Տըղեն ասաց. - Ձի ախպեր մ' էկեր ա, չը՞ս տեսեր, չէկե՞ր ա քու մոտ:

Ասաց. - Վալա՝ քու պես տըղե մ' էկավ, գա պըռներ եմ, կախեր եմ պատեն:

Ասաց. - Դե վազի՛, ա՛ռ, արի՛, քանի չըմեռեր:

Արաբ գյընաց, առավ, էկավ:

Երկու ախպեր ճանչըցան հիրարու: Էլան, երկուսն էլ ծիանքյ խեծան: Երկուսի ծիանքյ մեկ նըմուշ, երկուսն էլ օսկի ծեռքյ, օսկի մազ:

Առավ զԱրաբն էլ, ըզխազալն էլ, առան, էկան:

Էկան ուրենց ինգըրներու մոտ, ինգըրներ հախու չըն գըխ-շըցեր էյան տուն, գո կանած են սարի հառճև:

Ինգըրներ տեսան, օր երկու կարմիր ծիավոր, երկուսն էլ մեկ նըմուշ, ախչիկ մ'էլ խետքյեր առած էկան:

Էկան խընդրաց, էկան թագավորի տուն:

Թագավորի ախչիկ փանջարեն վեր տեսավ՝ իրիկ էկավ, մեկ էլ էնու պես գո խետ:

Պերին նստուցին, հըմեն էկան, տեսան, զարմացան: Չըն գյիտի ուրենց փեսեն ո՞ր մեկն ա:

Հիրիկուն էտա երկու ախպեր, թագավորի ախչիկ ու էտա արաբ ախչիկ գացին տանը վեր, խազալն էլ էփեցին, կերան:

Քյընան չուր խըլիսուն:

Խըլիսուն էտա արաբ ախչիկ խառցընեց թագավորի ախչըկեն:

Ասաց. - Թագավորի՛ ախչիկ, տու քու իրիկ կը ճանչնա՞ս՝ որ մեկն ա:

Ասաց. - Չէ՛, վալա՛, ես չըմ ճանչընար:

Ասաց. - Պատմա՛ քու գյըլխու գալած: Հառաճին, օր էկավ, ի՞նչըխ էղավ, հետին օր էկավ, ի՞նչըխ էղավ:

Ասաց. - Հառաճին փըսակեցի իմ վըրեն, տաս օր մնաց իմ մոտ: Տաս օրից ետ գյընաց նեճիր: Տաս օր մնաց, չէկավ: Ըն մեկ օր էլ բաղչապաներ ասին՝ էկեր ա քու իրիկ, գո բաղչեն: Ես էլ ճամխեցի, պերի իմ մոտ, էն էլ թուր քաշեց, էտիր մըչ ձի, մըչ էնի, պառկավ չուր խըլիսուն: Ես էլ ասի՝ էսա տաս օր կա՝ տու գացեր ես, դորիս էկեր ես, թուր կը տընես մըչ ձի, մըչ քյե, թե չըս առնի, ձի ասա: Էն էլ ասաց՝ ես ուխտ եմ էրե, էլման տ'էրթամ նեճիր: Էլավ, էթող, գյընաց:

Ըն տեղ էնու ախպեր հիմացավ, թե ուր ախպեր չըգացեր ուր կընգան մոտ:

Արաբն էլ ասաց. - Քու իրիկ էնա յա, քու մատնիկն էլ գո մատ, էլի ճանչըցի:

Էն էլավ, մատնիկ տեսավ, ճանչըցավ:

Երկու ախպեր էլ գնացին տուն: Մնացին երկու ախչըկներ:

Թագավորի ախչիկ արաբու ախչըկան ասաց. - Ապա էսա ի՞նչըխ էլան երկու, էնա մեկէլ հո՞ւստ ա:

Արաբ ասաց. - Էն մեկէլ էնու ախպերն ա:

- Ապա էն իմ առածն տաս օր դո՞ր գընաց:

Արաբ ասաց. - Էկավ էնա սար նեճիր, իմ խազալ հառճվեն փախեր էր, էպի մեր տուն, ես էլա հառեճ, պըռնեցինքյ գուլաշ, զէն տըրի գյետին, կախեցի պատեն, ուր ախպերն էկավ, զէնի ազատեց, ձի էլ առավ ու էկավ էնոր:

Ըն տեղ թագավորի ախչիկ քիչըմ տարվավ:

Ասաց. - Իմ իրիկ գացեր, չըկարցեր վըր էսա ախչըկեն, էն մեկէլ գացեր, զէնի ազատեր:

Թագավորն էլ էլավ, էտոնց ամսական կապեց, հարստացան, մարթավարի ապըրվան ընտեղ:

Մեկ օր արաբ ախչիկ ասաց էնոր իրկան. - Արի՛, էսա էրկրեն թողնինքյ, էյանք: Քու խոր երկիր դոր ա, էյանքյ էն տեղ:

Ասաց. - Ի՞նչ հապով էրթանքյ, ըստեղ մեր ապրուստ կէղի, հե՞ր էրթանքյ:

Ասաց. - Հըմեն օր թագավորի ախչիկ մե իրես կը տա, կասա՝ իմ խոր սայից կապըրվեքյ:

- Աղե՛կ,- ասաց,- իմ ախպոր ասեմ, կարելի ա էլ էն գա խընդ մե, էրթանքյ:

Պստիկ ախպեր ճոչ ախպոր կասա օրըմ. - Ախպե՛ր, ես տ'էրթամ երկիր: Թի կը գաս, արի էրթանքյ, չըս իգար, ես կէրթամ:

Ասաց. - Ի՞նչ պակսութեն կա մե, ի՞նչ հապով էրթանքյ:

Կասա. - Չէ՛, ես տ'էրթամ. գաս, տ'էրթամ, չըգաս, տ'էրթամ:

Էն էլ կասա. - Ես քու թարկ չըմ իտար, օր տու էրթաս, ես էլ տը գամ:

Նոր հիրիկուն թագավորի ախչըկեն էլ կասա. - Մենքյ տ'էրթանքյ երկիր: Կը գաս արի, չըսիգա՝ մենք տ'էրթանքյ:

Թագավորի ախչիկն էլ կասա. - Ես թագավորի ախչիկ եմ, ի՞նչըխ պիտի գյեղ տեղ ապըրվենքյ: Քյե ի՞նչ պակսութեն կա:

Կասա. - Չէ՛, թու պակսութեն չըկա մե, իմ ախպեր կէրթա, ես էլ տ'էրթամ:

Թագավորի ախչիկ կասա. - Թ' էնի առի ուր կնիկ, էրթա, ես ու տու չէրթանք:

Կասա. - Ես չըմ կաներ, գանս, չըգանս, տ'էրթամ:

Կասա. - Օր ես գանմ, ի՛նչ ասեմ, իմ խոսքով կէնե՞ս:

Կասա. - Ասա՛ խեմ քու ասած ի՞նչ ա:

Թանգանվորի ախչիկ կասա. - Հայդե մենքյ գանցինքյ քու խոր երկիր, հըմեն օր քու ախպըրկին ձի իրես տը տա, ասա՝ քու իրիկ էկավ, ես պըռնեցի, կախեցի պատեն, իմ իրիկ էկավ, զատեց: Ես թանգանվորի մ' ախչիկ, էնի բանռանդի: Ձի շատ զոռ կը գան:

- է՞,- կասա,- ես ի՞նչըխ էնեմ, գո էնպես էղավ:

Կասա. - Ես քյե պան մ'ասեմ, քու ախպոր ասա. թը քու խոսքով էրաց, ձի ասա: Քու ախպոր ասա, էնոր կնիկ թը թոնա, էնոր որ մեկ պիտեր՝ վոզիրի ախչիկ, սանտրանմի ախչիկ, ո՛ր մեկ կուզա, պերենքյ, փըսակենքյ վըր էնոր, առենքյ, խընդրանց էրթանքյ:

Էն էլ գյընանց, ախպոր ասաց:

Ասաց. - Ախպե՛ր, արի՛ քու կնիկ թո՛ղ, քյե որ մեկ ախչիկ պիտեր, պիրեմ քյե:

Ախպեր ասաց. - Ի՞նչ հանպով իմ կնիկ թոնեմ, ի՞նչ ա էրեր, անեվանե հե՞ր թողնեմ:

Ասաց. - Իմ կնիկ, քյոն քյար չըն ընգեր, արի թող, որ մեկ կուզես, պիրեմ քյե՝ սանտրանմի ախչիկ կուզես, վոզիրի ախչիկ կուզես, որ մեկ օր կուզես:

Կասա. - Իմ կընգանն թու կանբիյանքըմ չըկա, իմ կնիկ չըմ թողեր:

Տըղեն կէլի, կէրթա, թանգանվորի ախչըկան կը պատմա:

Թանգանվորի ախչիկն էլ կասա. - Պան մ'էլ ասեմ, իմ խոսքով էրա, թը չէ՝ չըմ իգան:

Կասա. - Ասա՛, հի՞նչ ա քու պանն:

Կասա. - Քու ախպեր զա՛ր, ըսպանա՛, ըն կընիկն էլ չըխո կը մըլենքյ տուս, ու ես, տու դորիս մեր քյեֆովն ենքյ:

Կասա. - Ձա՛նըմ, ես իմ ախպեր ի՞նչըխ ըսպանեմ:

Կասա. - Էրթանքյ երկիր, հա՛մ քյե իրես տը տան, հա՛մ ձի, հա՛մ քյե ամոթ ա, հա՛մ ձի:

Ըզտըղեն կը համոզա, օր ըսպանա զուր ախպեր:

Ու կէլին, ծիանքյ կը խեծին, կը տան ճամբախ, կը գան: Մեկ սըհաթ, մ'էրկու քանքյեն կեռանան: Թանգանվորի ախչիկն էլ մախսուս էնոր ջըլեր, պաներ թողած ա տուն, կասա ուր իրկան՝

տանոցեքյ, գանցեքյ պերեքյ, ճամբախն ըսպանա, թող արի, ասա՝ մնաց քաղաքյ:

Էնոնքյ էլ կէրթան, ըզպաններ կառեն, կը գան չուր ճամխի կես, թուրըմ կը զանի ախպէր գյըլէխ, զախպեր կը թալա ճամբախ, ծին կը քըշա, կը գա, կը խասի կըխտերուն:

Էտա Արաբն էլ փարի ա, կը հիմանա, թե ուր իրկան զարկեր, բրինդար թալեր ճամբախ, իկեր:

Կնիկն էլ կը տառնա, ուր Արաբու կերպարանքյ կը պերա ուր վերեն, տեգյեր կասա. - Տու իմ իրիկ ըրիր բրինդար, թալեցիր ճամբախ, մըկա ծե էրկըսիտ էլ օր ըսպանեմ, վի՞ր կաբիյաթն ա:

Էն էլ կասա. - Ես քու բախտ, քու Աստըծուն, ես էրի, տու չէնես, ես խապվա թագավրու ախչըկեն:

Կասա. - Դե՛ արի՛, ո՛ւխտ էրա, էլ թագավրու ախչըկե խոսքով չէնես, ես էրթամ, քու ախպեր առիմ, գամ:

Էն էլ ուխտ կէնա, կասա. - Ուխտ էղի, ես թագավորի ախչըկե խոսքով չէնեմ:

Արաբն էլ կը տառնա, կէրթա վըր իրկան: Իրիկն գու ինգեր ճամբախ:

Տեղ կը տա, զիրիկ կը ժըրըցուցա:

Իրկան կասա. - Տու հե՞ր մնացիր ըստա, քու ախպեր էկավ:

Կասա. - Վալա՛, ես ծիուց ինգա տակ, իմ աղըլ գացեր էր, չըմ գյիտեր՝ ի՞նչ էր էղեր ձի:

Էն էլ կառի իրիկ, կը գա, կը խասի տեգյեր, թագավրու ախչըկան:

Արաբ տեգյեր կասա. - Էն չըգյիտեր, թը տու ես զարկեր, գյիտա, թե ծիուց ա ինգեր տակ, տու էլ էնոր մ'ասեր, օր չէղիքյ իրարու դուշման:

Կէրթան գյեղի հառեճ: Մեկ էլ ճու ախպեր կը տեսի, օր էրկու կարմիր ծիավոր էկան, էրկու ծին էլ մեկ նըմուշ, էրկու կնիկ էլ գու խետքյեր:

Գյեղական էլ կը գան հառեճ, չըն ճանչընար, թե վոն ա, վոն չի: Կը գան, կէրթան ուրենց խոր տուն:

Ախպերն էլ չըգյիտեր, թը վոն են: Էնոնց ծեռքյեր, մազեր օսկի, չըճանչընար:

Էնոնքյ ախպէր կը խառցընեն, թը՝ տու վի՞ր տընեն ես, քյե ախպեր կե՞ն, չըկե՞ն:

Ախպերն էլ կասա. - Վա՛յ, ձի էրկու ախպեր կեն: Էրկուսն էլ գա՛ցին, չէկան:

Էնոնք էլ կասեն. - Մենքյ ենքյ քո՛ւ ախպըրներ:

Կը պատմեն էնոնց գյըլխու գա՛լա՛ծ:

Վերջ կէլին, էրկըսի խաղ, խաղտուն էլ կէնեն, էնոնքյ կը խասին ուրենց մըրազին, տո՛ւն էլ՝ քո՛ւն: